ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԴԴՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

1508 Գեղարքունիքի մարզ, Դդմաշենի գյուղապետարան
Հեռ. (0261) 6-13-54

REPUBLIK OF ARMENIA
MARZ OF GEGHARKUNIK
VILLAGEGOVERNMENT OF DDMASHEN

1508 Region of Gegharkunik, The villege of Ddmashen
Tel. (0261) 6-13-54

« 14 » « մարտի » 2012 թ.

ԳՊ/N 025/ Ե - 3 – 23 / 12

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ն. Ղ. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Դդմաշեն համայնքի ղեկավարի 09.01.2012-07.03.2012 որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

Դդմաշեն համայնքի ղեկավար՝ **Ա. Ավետիսյան**

15 03 2012թ.
Մուտք թիվ 1310-12

Կատ. Գ. Ներսիսյան
/0261/- 6-17-99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԴԴՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-1-Ա

գ. ԴԴՄԱՇԵՆ 1Փ. 30, Հեռ. /0261/ 6-13-54, 6-17-99

09 հունվար 2012թ.

ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2012թ. ազգաբնակչության տնտեսություններում անասնագլխաքանակի հաշվառում անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

1/ Կորյուն Մանուկյան – համայնքի ղեկավարի տեղակալ
2/ Գարիկ Ներսիսյան - աշխատակազմի քարտուղար
3/ Նորայր Մանուկյան - համայնքի անասնաբույժ
4/ Սիրանուշ Ավետիսյան - գործավար
5/ Աննա Գալստյան - առաջին կարգի մասնագետ
6/ Անուշ Ստեփանյան - առաջին կարգի մասնագետ

2. Հանձնաժողովին - անասնագլխաքանակի հաշվառումը կատարել 2012թվականի հունվարի 9-ին, 10-ին և 11-ին:

3. Աշխատակազմի քարտուղարին - հաշվառման տվյալները ամփոփել մինչև հունվարի 17-ը և սահմանված ժամկետում հաշվետվությունը ներկայացնել Սևանի վաճառագրական բաժին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԴԴՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-2 -Ա

գ. ԴԴՄԱՇԵՆ 1Փ. 30, Հեռ. /0261/ 6-13-54, 6-17-99

16 հունվար 2012թ.

ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Դդմաշեն համայնքի 2011թ. տարեկան բյուջեի կատարման եռամսյա համամասնությունները՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված N 1
Դիմաշեն համայնքի ավագանու
14.01.2011թ թիվ 2-Ն որոշման

ԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա/ Եկամուտների գծով						
ՏՈՂԻ N	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	ԸՆԴ.	I եռ.	I կիս	9 ամիս	տարի
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	53000.0	18973.0	34545.0	43528.0	53000.0
1100	1.Հարկեր և տուրքեր	21672.1	11052.0	18603.0	19965.0	21672.1
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից այդ թվում	18477.1	10027.0	16153.0	17190.0	18477.1
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	235.3	60.0	130.0	225.0	235.3
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	18241.8	9967.0	16023.0	16965.0	18241.8
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում	3095.0	1000.0	2400.0	2700.0	3095.0
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	3095.0	1000.0	2400.0	2700.0	3095.0
1131	Տեղական տուրքեր	100.0	25.0	50.0	75.0	100.0
1200	2. Պաշտոնական դրամաշնորհներ	28477.9	7121.0	14242.0	21363.0	28477.9
1300	3. Այլ եկամուտներ	2850.0	800.0	1700.0	2200.0	2850.0
	որից տեղ.ինք.կառ.մարմ. /անասնաբուժ/	1200.0	300.0	600.0	900.0	1200.0
	հողի վարձավճար	1550.0	400.0	1000.0	1200.0	1550.0
	տեղ.վճարներ մրց. և աճուրդ մաս. վճար	100.0	100.0	100.0	100.0	100.0

Բ/ Ծախսերի գծով						
գործառ. դաս	Բյուջետային ծախսերի անվանումները	Ընդ.	1եռ	1կիս	9ամիս	տարի
01.1.0	**Օրենսդիր և գործադիր մարմիններ. պետական կառավարում. ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ. արտաքին հարաբերություններ**	25027.0	7437.0	13942.0	18740.0	25027.0
01.1.1	Օրենսդիր և գործադիր մարմիններ. պետական կառավարում	25027.0	7437.0	13942.0	18740.0	25027.0
	այդ թվում					
	4111- Աշխատավարձ	14115.0	3620.0	7185.0	10650.0	14115.0
	4112-Պարգևավճար	1155.0	-	-	-	1155.0
	4131- Սոց. ապահ. վճար	2998.0	720.0	1403.0	2086.0	2998.0
	4212- Էներգ. ծառայություն	700.0	300.0	500.0	550.0	700.0
	4214- Կապի ծառայություն	488.0	238.0	288.0	388.0	488.0
	4215- Ապահովագրական ծախսեր	45.0	45.0	45.0	45.0	45.0
	4221- Ներքին գործուղումներ	600.0	148.0	355.0	455.0	600.0
	4232- Համակարգչային ծառ.	171.0	171.0	171.0	171.0	171.0
	4234- Տեղեկատվական ծառ.	100.0	100.0	100.0	100.0	100.0
	4241- Մասնագիտական ծառ.	600.0	100.0	600.0	600.0	600.0
	4252-Մեք և սարք. ընթ,վեր, և պահպ.	700.0	700.0	700.0	700.0	700.0
	4261- Գրասեն. նյութեր և հագ.	600.0	200.0	400.0	500.0	600.0
	4264- Տրան նյութեր	1845.0	765.0	1315.0	1615.0	1845.0
	4269-Հատուկ նպատակային նյութեր	700.0	300.0	700.0	700.0	700.0
	4822- Այլ հարկեր	30.0	30.0	30.0	30.0	30.0
	4823- Պարտադիր վճարներ	180.0	-	150.0	150.0	180.0
01.6.1	Ընդհ. բնույթի հանր.ծառ./այլ դաս. չպատկանող / այդ թվում	1433.0	-	1413.0	1423.0	1433.0
	4211-Գործառ. և բանկային ծառ.	30.0	-	10.0	20.0	30.0
	4241-Մասնագիտական ծառ.	753.0	-	753.0	753.0	753.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԴԴՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-3-Ա

գ. ԴԴՄԱՇԵՆ 1Փ. 30, Հեռ. /0261/ 6-13-54, 6-17-99

17 հունվար 2012թ.

ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ /ՎԱՐՉԱՏՈՒԳԱՆԱՅԻՆ/ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 25 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել վարչական /վարչատուգանային/ հանձնաժողով հետևյալ կազմով.

1/ Ավետիս Ավետիսյան - համայնքի ղեկավար - հանձնաժողովի նախագահ
2/ Կորյուն Մանուկյան - համայնքի ղեկավարի տեղակալ - հանձնաժողովի անդամ
3/ Գարիկ Ներսիսյան - աշխատակազմի քարտուղար - հանձնաժողովի քարտուղար
4/ Գուրգեն Հովհաննիսյան - ավագանու անդամ - հանձնաժողովի անդամ
5/ Էդիկ Ղարիբյան - ավագանու անդամ - հանձնաժողովի անդամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Դդմաշեն համայնքի ղեկավարի 2008 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 25 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԴԴՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-4-Ա

գ. ԴԴՄԱՇԵՆ 1Փ. 30, Հեռ. /0261/ 6-13-54, 6-17-99

20 հունվար 2012թ.

ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կազմավորել Դդմաշեն համայնքի զինապարտների ծանուցման տեղամաս հետևյալ կազմով.

1/ Ծանուցման տեղամասի պետ - Ավետիս Ավետիսյան
2/ Ծանուցման տեղամասի պետի տեղակալ - Կորյուն Մանուկյան
3/ Ծանուցման տեղամասի պետի օգնական - Նորայր Մանուկյան
4/ Ջոկի հրամանատար - Գարիկ Ներսիսյան
5/ Հանձնակատար - Բորիս Հակոբյան
6/ Հանձնակատար - Սաթիկ Սեդրակյան
7/ Հանձնակատար - Արթուր Շավարշյան
8/ Հանձնակատար - Աննա Գալստյան
9/ Տեխնիկական աշխատող - Անուշ Ստեփանյան
10/ Տեխնիկական աշխատող - Սիրանուշ Ավետիսյան
11/ Տեխնիկական աշխատող - Գարեգին Զաքարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԴԴՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-5 - Ա

գ. ԴԴՄԱՇԵՆ 1Փ. 30, Հեռ. /0261/ 6-13-54, 6-17-99

02 փետրվար 2012թ.

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 23.01.2012թ. N16-Ա որոշման դրույթները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող համայնքային հանձնաժողով հետևյալ կազմով.

1/ Կորյուն Մանուկյան - համայնքի ղեկավարի տեղակալ - հանձնաժողովի նախագահ
2/ Նորայր Մանուկյան - համայնքի ղեկավարի օգնական - հանձնաժողովի նախագահի տեղակալ
3/ Գարիկ Ներսիսյան - աշխատակազմի քարտուղար - հանձնաժողովի անդամ
4/ Բորիս Հակոբյան - աշխատակազմի գլխավոր մասնագետ - հանձնաժողովի անդամ
5/Գուրգեն Հովհաննիսյան - ավագանու անդամ - հանձնաժողովի անդամ
6/ Հրահատ Կիրակոսյան - ավագանու անդամ - հանձնաժողովի անդամ

2. Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համայնքային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշմամբ ստեղծված համայնքային հանձնաժողովի աշխատանքներին կարող են ներգրավվել նաև մասնագիտացված կազմակերպությունների ներկայացուցիչներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Դդմաշեն համայնքի ղեկավարի
02.02.2012թ. թիվ 5-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի /այսուհետ՝ համայնք/ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:
2. Համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման գործընթացը՝ կախված ընդգրկման տարածքից, հետևանքների բնույթից և նշանակությունից, կազմակերպվում է համայնքի ղեկավարի որոշումով ստեղծված մշտական գործող հանձնաժողովի կողմից:
3. Գնահատման ու հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:
4. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները հաշվառվում են դրանց առաջացման պատճառների ուսումնասիրման ու վերացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով:
5. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների ընդհանուր հաշվառումն իրականացնում են համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները:
6. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝
1/ կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը,
2/ ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը
3/ գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը:
7. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով համայնքում զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովին, որն էլ իր հերթին տեղեկատվությունը տրամադրում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը, վերջինս էլ տեղեկատվությունը տրամադրում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը և ՀՀ առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:
8. Տեղեկատվությունը ներառում է՝
1/դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.
2/ տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.
3/ դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի /անձանց/ կազմը /անձնական տվյալները/.
4/ դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԴԴՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-6-Ա

գ. ԴԴՄԱՇԵՆ 1Փ. 30, Հեռ. /0261/ 6-13-54, 6-17-99

27 փետրվար 2012թ.

ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻՆ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի, ,,Սոցիալական աջակցության մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, Դդմաշեն համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 16-ի ,,2012թ. տարեկան բյուջեի հաստատման մասին" թիվ 1-Ն որոշումը և ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ընտանիքում նոր երեխա ծնվելու կապակցությամբ Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.4.1/ 4722 հոդվածից տրամադրել մայրության նպաստ.

1/ Լիլիթ Հենրիկի Վարդանյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
2/ Տաթևիկ Վաչագանի Ղարիբյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
3/ Մերի Դավիթի Ղազարյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
4/ Անի Հայկի Սարգսյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
5/ Լիաննա Տիգրանի Հակոբյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
6/ Սուսան Մուշեղի Օհանյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
7/ Աննա Վարդանի Եփրեմյանին- 30.000 /երեսուն հազար/ դրամ
ԸՆԴՀԱՄԵՆԸ - 210.000 /երկու հարյուր տաս հազար/ դրամ

2. Գլխավոր մասնագետին - կատարել հաշվապահական գործարքներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԴԴՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-7

գ. ԴԴՄԱՇԵՆ 1Փ. 30, Հեռ. /0261/ 6-13-54, 6-17-99

27 փետրվար 2012թ.

ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի, ,,Սոցիալական աջակցության մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, Դդմաշեն համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 16-ի ,,2012թ. տարեկան բյուջեի հաստատման մասին" թիվ 1-Ն որոշումը և ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դդմաշեն համայնքում մահացած ներքոհիշյալ բնակիչների ընտանիքներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.3.1/ 4726 հոդվածից տրամադրել հուղարկավորության նպաստ.

1/ Աղունիկ Ալեքի Հայրապետյանի ընտանիքին - 40.000 /քառասուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել հանգուցյալի որդուն՝ Սամվել Անդրանիկի Հայրապետյանին:
2/ Անդրանիկ Սուրենի Գալստյանի ընտանիքին - 40.000 /քառասուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել հանգուցյալի որդուն՝ Սամվել Անդրանիկի Գալստյանին:
3/ Վարսենիկ Հարությունի Ներսիսյանի ընտանիքին - 40.000 /քառասուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել հանգուցյալի որդուն՝ Սամվել Մանուկի Ներսիսյանին:

ԸՆԴՀԱՄԵՆԸ - 120.000 /հարյուր քսան հազար/ դրամ

2. Գլխավոր մասնագետին - կատարել [illegible] պատասխան գործարքներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում [illegible] պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, /0261/ 6-13-54, 6-17-99

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մարտի 2012թվականի N – 8-Ա

ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և „Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների /կուսակցությունների դաշինքների քարոզչական պաստառները փակցնելու համար Դդմաշեն համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1/ Դդմաշենի կուլտուրայի տուն - հասցեն՝ 1փ. 53, չափը՝ 50 քմ
2/ Կանգառի սպասասրահ - Դդմաշենի միջնակարգ դպրոցի հարևանությամբ, չափը՝ 10 քմ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

2012 թ. մարտի 7
գ.Դդմաշեն